Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13149
hwy

№ 2.

ՀԱՇԻՒ

ԵՐԵՒԱՆԱՅ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ-ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐԵՑՓՈԽ ԴԻՄԻՏՐԻ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՊԱՊՈՎԻ,

սկսած Յունուարի 1-ից 1901 *ամի*
մինչև Յունուարի 1-ը 1902 *ամի*:

1902
ԵՐԵՒԱՆ, ՏՊԱՐԱՆ ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ
Эривань. Типографія Эм. Теръ-Григорянцъ.

13149

Дозволено Цензурою. 23 Января 1902 г.
г. Тифлисъ.

Ներկայացնելով այս անգամ ևս Երևանայ յարգելի Հայ հասարակութեան անցեալ 1901 թուականի «սկսեալ 1-էն Յունուարի 1901 ամի մինչև 1-ն Յունուարի 1902 ամի» հաշիւը, աւելորդ չեմ համարում ծանօթացնելու մի քանի մանրամասնութիւնների հետ, որոնք կարող են հետաքրքիր լինել շատերի համար։

Որովհետև շատ ծանր բան է ամբողջ հասարակութեան կողմից հաւատացած կոպէկների հետ գործ ունենալ՝ մանաւանդ երբ այդ կոպէկները հազարներով են եկել գնացել։ ուստի ամեն տարի պարտքս եմ համարում՝ մանրամասնօրէն գրչի անցկացնելու այն յարգելի անունները, որոնք իւրեանց նուիրաբերութեամբ օգնել են եկեղեցոյն, որպէսզի նուիրատուները ապահով լինեն, որ իրենց տուած կոպէկները ոչ թէ միայն խնամքով և զգուշութեամբ են պահուել, այլ եթէ ծախսուել է, օրինակի համար՝ մի կոպէկ եկեղեցւոյ անունով՝ կատարուել է մէկ ու կէս կամ երկու կոպէկի գործ ժողովրդի օժանդակախառն օգնութեամբ։ Իսկ մեծապատիւ հաշուետեսներիս ներկայացրել եմ, բացի մուտքի և ելքի հաշուից, առանձնապէս Ծննդեան և Զատկի լուսագին նուիրաբերող անձանց ստորագրութեամբ ցուցակը, նմանապէս

և մատաղի և ծախսուած փողերի դոկումենտներ «վավերագրեր» փող ստացողների ստորագրութեամբ։ Այժմս գրէթէ Ս. Լուսաւորիչ եկեղեցին 'ի ներքուստ ոչ մի բանի կարօտութիւն չունի, բացի կանանց դասի վերնատունը շինելուց, որը յուսալի է ապագայում էլ կատարուելու է և մէջը ներկուելու։ Մնում է եկեղեցւոյ շրջապարիսպը վերանորոգել, որ ամենաանհրաժեշտն է, որովհետև հին շրջապարիսպը քանդուելու վերայ է, իսկ պարիսպների դրսէի մասերում մայթերի նշանն անգամ չի մնացել. աններելի կլինի մեզ, այսպիսի մի փառաւոր եկեղեցի ունենալուց յետոյ՝ անշուք ու անմայթ շրջապարիսպ ունենայ եկեղեցին, մանաւանդ Երևանայ քաղաքային Վարչութիւնը ևս ամեն անգամ յիշեցնում է մեզ իւր պարտաւորեցուցիչ եզրակացութեամբ եկեղեցւոյ շրջապարսպի ու մայթերի վերանորոգութեան մասին։ Ես, ինչպէս մինչև այսօր և այժմս էլ, եկեղեցւոյ դրամարկղում առանց մի կոպէկ ունենալու՝ ձեռնարկել եմ եկեղեցւոյ շրջապարիսպը ութսուն և չորս սաժէն երկայնութեամբ գետնից վեր մի և կէս արշին բարձրութեամբ կոփածու քարի վերայ երկաթեայ վանդակապատ դրուակաւոր կերտուածքով և կոփածու քարեայ մայթերով, որի մասին նուիրատու պպ. Տիգրան Նիկիտիչ և Առաքել Գասպարիչ Աֆրիկեանները ընծայեցին հինգ հարիւր ռուբլի. Լիայոյս եմ որ սկսածս գործը, որը արժէ

ամենաքիչը չորսից մինչև հինգ հազար ռուբլի այդ ևս կաւարտեմ օգնութեամբ Երևանայ հայ հասարակութեան։

ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

1. Հանգուցեալ տիկին Ջաւահիր Մելիք-Շահնազարեանցի կտակած տունը հաստատուեց եկեղեցւոյ վերայ, յիշեալ տունը ազատ եղաւ կայսերական և քաղաքային հարկերից, վճարուեց հանգուցեալ տիկնոջ ժառանգին և դատաստանական ծախքերը—հազար հարիւր ռուբ. տակաւին եկեղեցին մնաց պարտ ժառանգներին չորս հարիւր ռուբլի։

2 Եկեղեցին դրսևից իւր դռներով և լուսամուտներով ներկուեց կիսադեղնավարդագոյն։

3 Եկեղեցւոյ չորս շուրջը տնկուեցաւ երկու շարք լորենու և նալբանդի ծառեր. վերահսկողութեամբ ագրոնոմ Պաւել Գրիգորիչ Կանդուրալեանի։

4. Էմին Տէր-Յովակիմի Տէր-Գրիգորեանցը սիրով տպում է ամեն անգամ եկեղեցւոյն վերաբերեալ յայտարարութիւններ ձրի։

5. Ճարտարապետ Վասիլ Ջոհրաբիչ Միրզոյեանը, բացի ամեն անգամ խորհուրդ տալուց եկեղեցւոյ շինութեանց սարքի վերաբերեալ, նաև գծել է ձրի պլան—փասադ նորաշէն զան-

գակատան, ու ինքն էլ հաստատել է տուել և միշտ վերահսկու է եղել նոյն շինութեանը, նոյնպէս գծեց պլան-ֆասադը եկեղեցւոյ շրջապարսպի և խոստացած է պարոնը, եթէ քաղաքում ջրանցք շինուի—եկեղեցւոյ բակում ջուր պիտի ընծայէ ֆոնտանի համար 'ի յիշատակ իւր և իւրայնոց՝ և այս բոլորը ի հարկէ ձրի։

6. Շինուեցաւ մի տարում սիրուն զանգակատուն, կանգնեց գմբեթի ծայրին ոսկեզօծ փայլուն խաչը Եգոր Սերգէիչ Տէր-Սահակեանի ծախքով, իսկ զանգակները կախուեցան 'ի յիշատակ հանգուցեալ Աւետիս և իւր կենդանի ամուսին Աննա Տէր-Յովակիմեանների։ պատուաբեր է և օրինակելի, որ կարճ ժամանակամիջոցում և իւր կենդանութեան օրով պ. Տէր-Սահակեանը մշտակայ յիշատակ է կառուցել։

7. Հարիւրաւոր նուիրատուների մէջ առանձին տեղ են բռնել, հանգուցեալ Դաւոնդ Դաղարեանների ընտանիքը, որոնք մինչև այսօր ընծայել են եկեղեցւոյն եօթն հազար ռուբլուց աւելի, երկրորդ Եգոր Սերգէիչ Տէր-Սահակեանը, երրորդ՝ հանգուցեալ տ. Զաւահիր Մելիք-Շահնազարեանը, չորրորդ՝ պրպ. Տիգրան Նիկիտիչ և Առաքել Գասպարիչ Աֆրիկեանները, որոնք մինչև յարդ ընծայած են եկեղեցւոյն մի հազար երեք հարիւր մանեթից աւելի և բացի այդ՝ սոցա դրամարկղը միշտ բաց է եղել եկեղեցւոյ համար՝ և փող չունեցածս ժամանակը եկեղեցին

հարիւրներով է պարտք վերցրել և շնորհակալութեամբ վերադարձրել իրենց առանց տոկոսի և առաձնապէս փող հաւաքելուն էլ օգնել են ինձ պ. Գաբրիէլ Դօլուխանեան Մմնացականեանցի հետ։

8. Եկեղեցւոյ չորս սկիհներից մէկը և մի վակաս փուրաժէ, աւելորդ լինելով, նուիրատուի հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ ծախուեց ուրիշ եկեղեցւոյ վերայ արժանապատիւ Գարեգին քահանայի ձեռքով և փոխարէնը շինուեցաւ միևնոյն նուիրատուի անունով նաւակաձև, երկփեղկեան պատուանդանով խնկատուի արծաթեայ և աւելացած հինգ ռուբլին՝ գրուեցաւ նուիրատուների ցուցակում նոյն նուիրատու Գանձակեցի Սահակ Սարգսեանցի անունով։

9. Եկեղեցին օծելուց յետոյ՝ երկու քահանայք արժանապատիւ Գրիգոր աւագ քահանայ Սուքիասեանցը և Գարեգին քահանայ Խաչատրեանցը առանց հերթապահելու, գրէթէ միշտ, ամեն օր ներկայ են գտնուել ժամերգութեան, միայն այդ քսան ամսուան մէջ տէր Գարեգին հայրը հիւանդութեան պատճառով բացակայ է եղել Երևանից եօթն ամիս (երկու ամառ հանքային ջրեր է գնացել) և որովհետև այս տարի էլ, ինչպէս անցեալ տարի, Տէր-Գրիգոր հայրը մի առանձին եռանդով օգնում էր մեզ, Սրբազան Առաջնորդի հաճութեամբ — ռոճիկներից աւելացած փողով մի գեղեցիկ այլբոմ ընծայուեց

տէր Հօրը եկեղեցու կողմից։ Իսկ լուսարարդպիրներից կարճ ժամանակամիջոցում—մեր եկեղեցում հրահանգուելուց, սովորելուց յետոյ, բաւարար ռոճիկով հրաւիրուել են ուրիշ քաղաքներ, որ Երևանում չ'տեսնուած բան է։

10․ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը, եկեղեցու օծումից յետոյ՝ երեք անգամ բարեհաճել է այցելել Նորակառոյց եկեղեցին հարկաւոր կարգադրութիւններ անելով ամեն անգամ, որոնցից մինը հրամայեց մէկ էլ աջակողմեան աւանդատանը Մկրտութեան աւազան շինել տալ, այդ դեռ չէ իրագործուած թէ գործի շատութեան պատճառով և թէ առայժմ նուիրատու չունենալով դորա մասին։

11․ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը, Ս. Էջմիածնում եղած Գրիգոր Լուսաւորչի մասունքներից մի մասը շնորհեց Նորակառոյց եկեղեցուն օրհնութեան կոնդակով հանդերձ. որը և ամփոփ բաղմեցրած է ձախակողմեան աւանդատանը փառաւոր փամփերթի տակ։

12․ Պատկերները միմիայն իւղանկար և տէրունական են և այն էլ որոշ բարձրութեամբ կախուած պատերից ($2^1/_2$ արշին է) ինչպէս մեր բոլոր հին եկեղեցիներում։

13 Ծաղիկները սպիտակ գոյնից բացի, ոչ մի գոյն 'չի ընդունում ըստ կարգադրութեան Վեհափառ Հայրապետի։

14․ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետի կարգադրութեան համաձայն՝ սեղանի ջահը, որ կախուած էր պատարագիչ քահանայի կանգնելու վերայ՝ այժմ փոխուած է մի ուրիշ յարմար տեղ սեղանից ներքև, որով թէ սեղանը աւելի պարզ է երևում և թէ պատարագիչ քահանայն ազատուած է մոմի կաթիլներից։

15․ Սեղանի վերայ Սուրբ Երրորդութեան մեծ պատկերի առաջ՝ բացի Սուրբ խաչից և Աւետարանից (կողքերին մասնատուփեր և խնկատուփեր, աշտանակներ) ուրիշ ոչ մի բան չի դրուած և չի էլ դրուելու։

16․ Մոմի սեղանի վերայ ժապաւինեալ տոմարից երևում է, որ եկեղեցուն ծխական ժողովուրդ դառնալ ցանկացողները իւրեանց սեպհական ստորագրութեամբ վաթսուն և երեք ընտանիք են, որոնցից քառասուն և եօթը Գրիգոր աւագ քահանայ Սուքիասեանցի ծխերից են, վեցը տէր Գարեգինի, հինգը Տէր Կորիւն Պանծուլազեանցի, իսկ մնացած հինգը ուրիշ հինգ քահանաների ծուխից։ Ժողովուրդը սերտ կապուած լինելով իւրեանց ծխական քահանայից հետ, ուստի շատերը իւրեանց ցանկութեան և յարմարութեան հակառակ չ'պիտի կարողանան եկեղեցուս ծուխ գրուել, իսկ մեր կողմից աչքի առաջ ունենալով եկեղեցու կարիքը, կ'առաջարկէինք, եթէ յարգելի հասարակութիւնը յարմար կը դատէ Նորակառոյց եկեղեցու համար նշանակուէին այնպիսի քահանաներ, որոնք

որոնք իւրեանց ծխականներով կարող կ'լինին մեծ յարմարութիւն ունենալ եկեղեցւոյս ծխական գրուելու, մանաւանդ, որ երկու քահանաները շատ քիչ եմ համարում եկեղեցւոյս համար, իսկ նոր քահանայ ձեռնադրելու մասին խօսք անգամ չի կարող լինել, որովհետև քահանայից թիւը Երևանում ինչպէս և նահանգում չափից դուրս շատ է, ծխականների թիւը ամեն մի քահանայի շատ սակաւ, ուստի և եկամուտը դորանց այնքան նուազ, որ բացագրելը կամաչեցնէ շատերիս։

17· Նկատելով, որ Երևանայ եկեղեցիներում տարուայ մէջ 100—200 ռուբլի աւելի չի ստացւում գանձանակից և թէ ժողովուրդը ինչպէս է խոյս տալիս եկեղեցուց գանձանակի ժամանակ, յարմար դատուեցաւ պահել միայն մէջ աշխարհի գանձանակը, եկեղեցւոյ մի քանի անկիւնում կախ տալ գանձատուփեր, և աւելացնել մոմերի վերայ գինը (բոլոր եկեղեցիներում մոմը ծախվում է ամեն օր, իսկ գանձանակը հաւաքվում է շաբաթը չորս անգամ) որը և տուեց ցանկալի հետևանք· տեսնուած չի Երևանում տարուայ մէջ 300—500 մանեթից աւելի մոմ ծախուի, իսկ նորակառոյց եկեղեցում քսան ամսուայ ընթացքում 2200 մանեթից աւելի մոմ է ծախուել։

18· Անտեղի չի լինիլ նկատել իմ կողմից մեր քաղաքի մի որոշ դասակարգի կանանց, որոնք մոմը եկեղեցում առնելու փոխանակ, փո-

ղոցիցն են գնում, բերում, եկեղեցում վառում մոռանալով, որ թէ ծախողները իրաւունք չունեն մի գրուանքից պակաս մոմ ծախելու և կարող են խիստ պատասխանատուութեան ենթարկուիլ և թէ եկեղեցին զրկւում է իւր միակ արդիւնքից։

19· Եկեղեցւոյ ծախսերը աւարտելուց յետոյ մեր պարտականութիւնը կ'լինի կազմակերպել երգեցիկ խումբ և կիւրակնօրիայ քարոզ։

20· Այն օրից երբ Սրբազան Առաջնորդ Գերապատիւ Սուքիաս Արքեպիսկոպոսը, իւր օրհնութեամբ կատարեց եկեղեցւոյ փառաւոր օծումը, մինչև օրս էլ եկեղեցւոյ ներքին և արտաքին պայծառութեան սրտանց և ջերմ սիրով օգնել է, իւր հմտալից խորհուրդներով, սրտառուչ յորդորներով, անձամբ մասնակցելով եկեղեցւոյ նիւթականի մասին հոգալում, մանաւանդ խոշոր նուիրատուներին իւր հայրական օրհնութիւնն ու յորդորանքը և առաւել ժրացրին ու եկեղեցին իւր փառաորութեան մէջ կանգնեց։ Սրբազան հօր հաճախ վերահսկողութեամբ և նոյն եկեղեցում իւր սրտառուչ քարոզներով Երևանի հայ հասարակութեան 'ի սիրտ և 'ի հաւատ կոչեց, որ այս փառաւոր եկեղեցին կազմակերպուեց։

21· Ժամերգութիւնները սկսվում են միշտ որոշած ժամերին անխափան. թէ ամառ և թէ ձմեռ։

ՑԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԻՐԵՂԵՆՆԵՐԻ։

Ա.

1*) Եկեղեցւոյ խաչկալը, արդեամբ Ազամալ Սիմէօնից Մելիք Ազամալեանի։

2) Գմբեթաւոր փամփերոց–մասանց խորանում Յովհաննէս Յարութիւնեան Բեգնազարեանցի։

Բ. ԽԱՉԵՐ։

10) Մի հատ արծաթեայ խաչ, քարերով զարդարուած, Ս. Լուսաւորչի մասունքը մէջ ամփոփած, նուէր Թէլաւեցի տ. Անաստասիա Յովսէփեան Տէր-Սահակեանից։

11) Մի մեծ ոսկեզօծ խաչ իւր խնծորագլխով զանգակատան վերայ, Եգոր Սերգէից Տէր-Սահակեանից։

Գ. ՄԱՍՆԱՏՈՒՓԵՐ.

2) Մի հատ մասնատուփ «պերլամուտրովի-սադաֆիա» փորանկար Ծնունդ և յարութիւն Տեառն, արծաթեայ շրջանակով. նուէր տ. Եկատերինէ Մկրտչեան Տէր-Մարուգեանից։

Դ. ԲՈՒՐՎԱՌՆԵՐ։

3) Մի հատ բուրվառ ֆուրաժի. նուէր տ. Ալմաստ Աբրահամեան Դևոյեանից։

Զ. ՋԱՀԵՐ։

8) Մի զոյգ բրոնձ ապակեայ ջահեր, ար-

*) №№-ը դուրս առած են եկեղեցական մատեանից։

ժողովրդեամբ 113 ր. 20 կ.։ Հրաւիրում ենք կրօնասէր նուիրաբերողի։

9) Մի հատ ապակեայ 12 մոմակալեան ջահ, նուէր Երուանդ Աֆրիկեանցի, 'ի յիշատակ հօրն իւրոյ հանգուցեալ Մկրտչի։

Է. ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ։

5) Մի կարմիր կերպասեայ վարագոյր մասանց փամփերթի, նուէր Յովհաննէս Յարութիւնեան Բեգնազարեանից։

Ը. ԱՇՏԱՆԱԿՆԵՐ։

4) Մի զոյգ թանգագին աշտանակ, նուէր տ. Աննա Սարգսի Ամիրխանեանից, (անցեալ տարի սխալմամբ այն տիկնոջ անունը Սոնա էր տպագրուած)։

5) Մի հատ մեծ աշտանակ, նուէր տ. Վառվառէ Խաչատրի Յովհաննիսեանից։

6) Մի հատ նոյնանման աշտանակ, նուէր Յարութիւն Մահտեսի Միքայէլի Շամիլեանից։

Թ. ՄՈՄԱԿԱԼՆԵՐ։

8) Մի զոյգ պղնձեայ մոմակալներ, նուէր տ. Փարի Ղարիբեանից։

9) Մի հատ դեղին պղնձեայ մոմակալ նուէր տ. Ալմաստ Աբրահամի Դևոյեանից։

Ժ. ՍԿԻՀԵԱՑ ԲՈՂԵՐ։

8) Մի հատ սպիտակ ձեռագործ քօղ. նուէր տ. Սոֆիա Բօրիսևնա Սաւիչից։

ԺԱ. ՍՓՌՈՑՆԵՐ։

7) Մի երկայն սփռոց, ասեղնագործած կապոյտ ատլասի վերայ. նուէր տ. Օլգա Սուքիասի Շխեանից։

8) Մի հատ սպիտակ սփռոց «Կարբիի հին աւերուած եկեղեցուց բերուած» ասեղնագործ, նուէր տ. Եղիսաբէթ Գրիգորի Շահազիզեանից։

9) Մի սփռոց խաս կտորից, նուէր օրիորդ Ռոզալիա (Վարդուհի) Վանեցեանից։

10) Մի հատ մեծ սփռոց, յարչարանաց շաբաթին մեծ սեղանը ծածկելու համար, եկեղեցւոյ հաշուով։

11) Մի սփռոց կարմիր թավշից, ոսկեթելով կարուած, նուէր տ. Զանեղան Գէորգի Բաբաջանեանից։

ԺԲ. ԱԻԵՏԱՐԱՆԻ ԹԱՇԿԻՆԱԿՆԵՐ

8) Մի հատ վարդագոյն թաշկինակ, նուէր տ. Եղիսաբէթ Ահարոնեանից։

9) Մի հատ վարդագոյն թաշկինակ, տ. Սաթէնիկ Յակովբի Մատնիշեանից։

ԺԳ. ԺԱՄԱՇԱՊԻԿՆԵՐ։

8) Երեք հատ պիկէի սպիտակ ժամաշապիկներ, եկեղեցւոյ հաշուով։

ԺԴ. ՂԵՆՋԱԿՆԵՐ։

3) Երեք հատ քաթանի ղենջակներ, նշխար գործելու ժամանակ գործածելիք, եկեղեցւոյ հաշուով։

ԺԶ. ՇՈՒՐՋԱՌՆԵՐ

2) Երկու հատ միատեսակ շուրջառներ, դեղին կերպասեայ արծաթաթել, եկեղեցւոյ հաշուով։

ԺԹ. ԽՆԿԱՏՈՒՓԵՐ։

2 և 3) Երկու հատ խնկատուփեր արծաթեայ «կերտուած տապանակ ուխտի ձևով», նուէր հին Զուղայեցի տ. Մարիամ Աւագի և Գաբրիէլ Իսահակի Աբրահամեաններից։

4) Մի հատ խնկատուփ արծաթեայ, նաւակաձև, նուէր Գանձակեցի Սահակ Սարգսեանից։

5) Խնկատուփերի համար մի զոյգ արծաթեայ ոսկեզօծ գդալներ, նուէր Վանեցի եղբայրք Տէր-Արիստակէսեաններից։

ԻԲ. ԳՐԵԱՆՔ։

14) Մի հատ արծաթապատ աւետարան, նուէր յիշատակի հանգուցեալ օր. Մարիամ Սարգսի Անանեանց։

15) Մի հատ ձայնագրեալ պատարագի արարողութեան գիրք, նուէր Ոսկան Աբգարի Աբգարեանից։

16) Մի հատ մեծադիր կվիտանցիոնի գիրք, նուէր Էմին Տէր Յովակիմի Տէր Գրիգորեանից։

2) Երկրորդ համարով մաշտոցը արծաթապատ է արած Դեչրլուեցի Պօղոս Դասպարեանի

հաշուով, ի յիշատակ իւր հանգուցեալ եղբօր Դանիէլի։

ԻԳ. ԶԱՆԳԱԿՆԵՐ։

2) Մի զոյգ մեծ զանգակներ 20 փութ 15 ֆունտ ծանրութեամբ, նուէր Աւետիս Մկրտչեան և Աննա Վարդանեան ՏԷր Յովակիմեաններից։

ԻԴ. ԳՈՐԳԵՐ։

12) Մի հատ գորգ գարուսի թելով գործած, նուէր տ. Ովսաննա Ղազարեանից։

ԻԶ. ԿԱՀ ԿԱՐԱՍԻՔ և ԱՄԱՆՆԵՐ։

21) Մի հատ Եւրոպական ջրքամ, անցեալ տարուայ հաշուի մէջ յիշուած եկեղեցւոյ հաշուով, գինը յետ դարձրած՝ նուիրեց եկեղեցւոյն Արշակ Նիկիտիչ Յակոբեանցը։

25) Մի զոյգ նստարաններ երկաթեայ ոտներով, նուէր Յարութիւն Շամիլեանից, 'ի յիշատակ ծնողաց իւրոց Միքայէլի և Եղիսաբէթի։

26) Մի հատ բազկաթոռ «քազմոցաւոր» նուէր տ. Ովսաննա Ղազարեանից։

27 և 28) Երկու հատ երկար նստարաններ և մի պահարան զգեստների, Յովհաննէս Մնացականի Բուդաղեանից և Արամ Անդրէասի Դալստեանից։

29) Երկու հատ նստարաններ տ. Նազլու Միրզոյեանից և տ. Թամամ Շահպազեանից։

13149

30) Երեք արկղ տոմմեներ տ. Ովսաննա Ղազարեանից։

31) Հինգ հատ Վիէննայի աթոռներ տ. Նոյեմզար Մելիք Աւետիսեանից։

32) Մի հատ մեծ կաթսայ մատաղի, Քանաքեռցի տ. Գիւլիզար Մուրադեանից, 'ի յիշատակ ամուսնոյ իւրոյ Սողոմոնի Յակոբեանց։

33) Մի հատ քափկիր եկեղեցւոյ հաշուով։

34) Մի հատ մեծ դանակ եկեղեցւոյ հաշուով։

35) Խորանի մեծ սեղանը արկղներով, նիւթը եկեղեցուց, իսկ կերտուածքը ձրի շինեց Գասպար Մանուկեան Մուրադեացը։

36) Մի հատ մատուցարան, երեք հատ շրջանակներ Վեհափառի կոնդակների համար և մի հատ շորի խոզանակ «չոտկ» եկեղեցւոյ հաշուով։

37 և 38) Մի գեղեցկագիր արկղ Ս. Մասունքների համար. նուէր Մկրտիչ Յակոբի Պազիկեանից։

42) Մի հատ մեծ վէմ քար ամբողջ պատուանդանով, գտնուած հին քանդուած Հայկական եկեղեցուց. նուէր բարեսիրմիկ պարոնիկ Մուսա խանից։

43) Մի փայտեայ սեղան մոմածախքի, եկեղեցւոյ երկրորդ դրան առաջ. նուէր ատաղձագործ Կարապետ Մուրադեանից։

ԻԹ. ՀՈՂԱԹԱՓՆԵՐ։

3) Երեք զոյգ կաշուէ հողաթափներ, եկեղեցւոյ հաշուով։

Լ. ՄԵԽՈՒՈՆԱՏՈՒՓԵՐ։

1) Մի հատ արծաթեայ աղաւնի, նուէր Կոստանդին Արտեմիչ Իւզբաշեանից։

2) Մի հատ արծաթեայ Միւռոնատուփ 21 ռուբլի 50 կոպ. արժողութեամբ. հրաւիրում ենք բարեպաշտ նուիրաբերողի։

ԼԱ. ՈՒՐԱՐՆԵՐ։

1) Երկու հատ միանման ուրարներ. տ. Հեղինէ Յակոբի Մելիքեանից։

2) Մի հատ սպիտակ դիպայից ուրար. տ. Ալմաստ Աբրահամի Դևոյեանից։

ԼԲ. ԹԻԹԵՂԵԱՅ ՄՈՄԵՐ ԱՇՏԱՆԱԿՆԵՐԻ։

1) Մի զոյգ թիթեղեայ մոմեր. Աննա Սարգսի Ամիրխանեանից։

2) Մի զոյգ նոյնանման մոմեր. Գաբրիէլ Դօլուխանի Մնացականեանից։

3) Մի զոյգ նոյն մոմերից. Յովհաննէս Համբարձումի Բալասանեանից։

4) Մի զոյգ մոմեր. Պետրոս Խաչատրի Յովհաննիսեանից։

5) Մի զոյգ մոմեր Յակոբ Տէր-Արիստակէսեանից։

ԼԳ. ԾԱՌԵՐ։

2) Երկու հատ ակացի ծառեր, Յովհաննէս Մելիքսէդեանից։

3 և 4) Երեսուն հատ ընտիր լորենու և երկու հատ էլ նալբանդի ծառեր, Իսահակ Ղահրամանի Մելիք-Աղամալեանից։

5) Մի հատ նալբանդի ծառ, Կոստանդին Եգորիչ Կամսարականից։

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔ։

1. Մոմածախքից ստացուել է	1047 ր. 01 կ.
2). Տասն և մի պսակներից լուսագին	21 ր. 95 կ.
3). Քառասուն և եօթ մկըրտութիւնից	23 ր. 25 կ.
4) Ս. Ծննդեան լուսագին.	19 ր. —
5. Զատկի լուսագին .	72 ր. 20 կ.
6. Եկեղեցւոյն պատկանեալ տան վարձը Եգոր Յովհաննիսեանից	28 ր. 20 կ.
7. Տ. Ովսաննա Ղազարեանից	500 ր. —
8. Կոստանդին Զարգարեանից	248 ր. 65 կ.
9. Զատկի մատաղագին .	129 ր. 1 կ.
10. Շէնգաւթայ այգւոյ կապալառու Յարութիւն Մահտեսի Բաղալեանից. . . .	60 ր. —
11. Վասիլ Տէր Աստուածատրեանից	25 ր. —
12. Գանձատուփից . .	26 ր. 85 կ.
13. Աղքատաց գանձատուփից	5 ր. 16 կ.
14. Վաթսուն եօթ ֆունտ կոճատ մոմ ծախուած Աղեքսանդր Յակոբեանցին։ . . .	32 ր. 50 կ.
15. Շէնգաւթայ այգւոյ ծառերը ծախուած Անդրիաս Տէր-Աստուածատրեանցին։ , .	56 ր. —

16. Գէորգ Ջ. Գէորգեանից 100 ր. —

17. Ծախուած եօթ հատ գե-րաններից . . . 7 ր. —

18. Տասն և մի տօներից լու-սագին . . . . . 14 ր. 65 կ.

2416 ր. 43 կ.

Քաղուածք դրամանուիրաբաշխական տումարից, որը ժապաւինած ու վաւերացրած է վիճակային Կոնսիստորիայով։

1. Նուէր տ. Հռիփսիմէ Մե-լիք Քիշմիրեանից . . . 50 ր. —

2. Եղիսաբէթ Յակոբեան Կախիանեանից . . . 1 ր. —

3. Սօնա Բարաղամեանից . 3 ր. —

4. Պետրոս Ահարոնեանից . 5 ր. —

5. Գրիգոր Ադամեանից . 1 ր. —

6. Աբգար Գուլամիրեանից . 5 ր. —

7. Մարտիրոս Մ.-Բաղալեանից 5 ր. —

8. Մինաս Պարսամեանից . 1 ր. —

9. Պօղոս Կանդուրալեանից 15 ր. —

10. Նիկողայոս Աղամեանից 5 ր. —

11. Անդրէաս Տէր Աստուա-ծատրեանից . . . 5 ր. —

12. Ալեքսան Մելքոնեան Բու-ջախչեանից . . . . 1 ր. —

13. Գանձակեցի Սահակ Սար-գսեանից . . . . 5 ր. —

14. Տիգրան Ն. Աֆրիկեանից 350 ր. —

15. Առաքել Գ. Աֆրիկեանից 350 ր. —

16. Յովհաննէս Տէր-Նիկողայո-սեանից . . . . 1 ր. —

17. Գանձակեցի Աղեքսանդր Յակոբեանից . . . 5 ր. —

18. Թադէոս Մելիք Անդրէա-սեանից . . . . 10 ր. —

19. Աղաջան Արշակունուց . 5 ր. —

20. Աւէտ Միրզայեանից . 5 ր. —

21. Տիկին Աննա Յակոբեանից 5 ր. —

22. Եակով Վլասովիչ Դօլգա-նիօվից Яковъ Власовичъ Долганевъ 5 ր. —

23. Յովհաննէս Յարութիւնեան Բեգնազարեանից . . . 150 ր. —

24. Սոփիա Յովհաննիսեանից 10 ր. —

25. Խաչատուր Արզումանեանից 10 ր. —

26. Աւետիս Ենգիբարեանից 10 ր. —

27. Յարութիւն Մահտեսի Մի-քայէլեան Շամիլեանից . . 70 ր. —

28. Եսայի Բաքայիչ Ջանփո-լադեանից . . . 100 ր. —

1188 ր. 00

\+ 2416 ր. 43 կ.

3604 ր. 43 կ.

ՅՐՆԹԱՑՍ 1901 ՏԱՐՈՒԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԱԽՔԸ.

1. Երկու կտոր մարմարոնեայ քարերի հանգուցեալ Ղևոնդ Ղազարեանի և տ. Ովսաննա Ղազարեանի յիշատակագրութիւնները, վերան փորագրելու և սիւների վերայ ամրացնելու ծախքը . 128 ր. 90 կ.
2. Մի հատ վերաբերչի շապիկ . 45 ր. 68 կ.
3. Եկեղեցւոյ տների քաղաքային հարկը . . . 22 ր. 30 կ.
4. Սեղանի մեծ պատկերին 247 ր. 85 կ.
5. Եկեղեցւոյ պաշտօնեաներին ռոճիկ . . . 596 ր. 55 կ.
6. Եկեղեցում ծախած մոմեր 269 ր. 40 կ.
7. Հաշուետեսոր տպել տալու 32 ր. —
8. Եկեղեցւոյ բագի պլան ու փասագի պատճէն հանելուն . 15 ր. —
9. Աղքատ ընտանիքներին . 7 ր. 30 կ.
10. № №-ին մէկէլ տարուայ եկեղեցւոյ պարաքից վճարուեց. 413 ր. 84 կ.
11. Եկեղեցին արտաքուստ ներկելուն՝ դռներով, լուսամուտներով և ամբողջովին . . . 275 ր. —
12. Մատաղի ծախք . 99 ր. 42 կ.
13. Եկեղեցւոյ տանիքը երեք անգամ կանաչագոյն ներկելուն . 150 ր. —
14. Արտաշէս Տ.-Ներսէսեանին 600 ր. —
15. Մասանց խորանի փամփերթը շինելուն . . . 155 ր. 68 կ.

16. Երկու հատ շուրջառներ պատրաստելուն . 82 ր. 87 կ.
17. Հազար հատ նայիգի քարին վճարուած է . 150 ր. —
18. Զանգակատունը ներկելուն 50 ր. —
19. Զանգակները կախ տալուն 42 ր. 75 կ.
20. Զանգակատան երեք շուրջը պարապետ շինելուն . 131 ր. 88 կ.
21. Եկեղեցւոյ զանազան զարդարանքներին, սլեսարներին, երկաթեղէնի, ալիւրի, ածուխի, քարտաշներին, մշակներին, նոր տանը դռներ շինելուն, կնքանիշների (մարկաներ) կարի և այլն մանր բաներ շինել տալու ծախք . 369 ր. 31 կ.

3885 ր. 73 կ.
— 3604 ր. 43 կ.
„ 281 ր. 30 կ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

1902 թ. 8 Յունվարի, ներքոյ գրուած Երևանու Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ հաշուառեսներս քննելով պ. երեցփոխ Դմիտրի Պապովեանցի ներկայութեամբ մուտքը՝ սկսած 1901 թ. Յունուարի մէկից մինչև 1-ն Յունուարի 1902 թ. թուով հարիւր ութսուն և եօթն համար, եղաւ երեք հազար վեց հարիւր և չորս ռուբլի քառասուն և երեք կոպ. և ելքը սոյն վերո-

յիշեալ ժամանակամիջոցում՝ հարիւր իններորդ համարով ընդ ամենը երեք հազար ութն հարիւր ութսուն և հինգ բուբլի եօթանասուն երեք կոպ. գտանք ուղիղ և մուտքը դուրս գալով ելքից եկեղեցին մնաց պարտ №№-ին երկու հարիւր ութսուն մէկ բուբլի երեսուն կոպ. (281 ր. 30 կ.) որոյ վասն ստորագրեմք։ Գաբրիել Մնացականեանց, Տիգրան Աֆրիկեանց և Գրիգոր Ամիրեանց։

Պպ. հաշուետուները եկեղեցոյ բոլոր պաշտօնեաների ներկայութեամբ մի առ մի զննելով եկեղեցւոյ բոլոր իրեղէնները՝ գտան ամենայն ինչ իրենց տեղում անկորուստ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Հաշիւ տեսնվելուց յետոյ, եկեղեցւոյն ընծայեցին Աղեքսանդր Յովհաննիսեան Օհանեանցը 25 ր., Յովհաննէս Մկրտչեան Աստուածատրեանցը 25 ր., հանգուցեալ Ղազարեան տ. Ովսաննայի կտակի համաձայն եկեղեցին ստանալու է կտակակատար Մեծ. Նիկիտա Արտեմիչ Տէր-Սարգսեանից 3000 բուբլի՝ տ.տ. Անանեաններից 600 բուբլի՝ նոյնպէս և պպ. Թադէոս և Յովակիմ Յովհաննիսի Թադէոսեաններից 500 բուբլի՝ որոնք պիտի անցնեն ապագայ տարուայ հաշուի մէջ։

Երեցփոխ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Երևանայ

ԴԻՄԻՏՐԻ Մ. ՊԱՊՈՎ.